

## Առօրեայ Մտահոգութիւն հեղինակ՝ Երուանդ Կոպէլեան

«Ժուժկալ Նպարավաճառ» Քիր Պօտոս Եուվանօփուլօս, ռունգերուն մէջ մխրճեց բթամատներուն մինչեւ այն մասերը, որոնք մարդակազմութեան մէջ *Տալանժին*<sup>[1]</sup> կը կոչուին: Երկա՛ր երկար քիթը խառնեց Քիր Պօտոս Եուվանօփուլօս, ու յետոյ, դիմացի պատէն կախուած նկարին նայեցաւ: Այս տեսակ նկարներու յաճախ կարելի էր հանդիպիլ հին նպարավաճառներու խանութներուն մէջ: Նկարը երկու մասէ կը բաղկանար: Առաջին մասը ցոյց կու տար գէր մարդ մը, որ ոտքը ոտքին վրայ դրած նստեր էր աթոռին վրայ, դրամարկդի մը քով: Դրամարկդը բերնէ բերան լեցուն էր դրամով եւ նկարին վերի կողմը սապէս արձանագրութիւն մը կար. «Կանխիկ ծախողը այսպէս կ'ըլլայ»: Ասոր քով ուրիշ նկար մը, նիհար, փճացած մարդ մը՝ գլուխը ձեռքերուն մէջ առած, պարապ դրամարկդ մը եւ պարապ խանութի մէջ վազվզող մկներ: Այս նկարին վերի կողմն ալ կար սապէս արձանագրութիւն մը. «Ահաւասիկ ապառիկ տուողին վիճակը»:

Քիր Պօտոս Եուվանօփուլօս, երկար երկար նայեցաւ կանխիկ առեւտուր ընող նպարավաճառին նկարին: Յետոյ ոտքը ոտքին վրայ նետեց ու փորը քիչ մը եւս դուրս հանեց: Յար եւ նման էր նկարին մէջի առեւտրականին: Բայց Քիր Պօտոս Եուվանօփուլօս ապառիկ ալ կու տար եւ ապառիկ առեւտուրը աւելի շահաւետ էր գործը գիտցողին համար:

Ոտքի էլաւ ու կամաց կամաց յառաջացաւ դէպի լուբիային պարկերը: Ձեռքերը մխրճեց պարկերուն մէջ ու միջոց մը լուբիաները խառնելէ վերջ, դարձեալ ձեռքովը հարթեց զանոնք: Յետոյ երկար երկար նայեցաւ փայտիկի մը վրայ անցուած խաւաքարտի կտորին, ուր գրուած էր.

«Լուբիա 68 դրուշ»:

Խաւաքարտը հանեց փայտիկին վրայէն. դարձուց, շրջեց, «լուբիա»ն հակառակ դարձաւ, բայց 68ն ալ 89 եղաւ: Քիր Պօտոս Եուվանօփուլօս լուբիայի պարկերուն դէմը անցաւ ու սկսաւ մտածել.

— Քիւոյէն 21 դրուշ: 21 դրուշ ալ գնումի գինին վրայէն, 42 դրուշ: Քիւօ մը լուբիայէն 42 դրուշ: Լուբիան աղքատին միսն է եղեր: Ժողովուրդն ալ վրան կը թափի լուբիային: Կէ՛ր հա կեր: Կ'ուտուի ալ անպիտանը:

Խանութին դուռը բացուեցաւ, Համբար Ադան ներս մտաւ: «Ժուժկալ Նպարավաճառ» Քիր Պօտոս Եուվանօփուլօս իր հաշիւը կէս ձգեց ու գլուխը դրան կողմը դարձուց:

— Խերն անիծեմ, ըսաւ Համբար Աղա յիշոց մը արձակելով. այս աշխարհի վրայ նպարավաճառ ըլլալու է եղեր: Շաքարը կը սղէ նպարավաճառներուն աչքը լոյս: Լուցկի չի գտնուիր, Քիր Պօտոս գործի կը լծուի:

— Չէ՛, չէ, գիտցածիդ պէս, կարծածիդ պէս չէ, առարկեց Քիր Պօտոս Եուվանօփուլօս: Մեծ լեռը մեծ երկրաշարժ կ'ունենայ: Այս գործերը խօսքով չեն դառնար: Ամառ եկաւ, սառնադարան մը գնել կ'ուզէի՝ դրամը ո՞ւր է: Խանութն ու տունը մեծ նորոգութեան մը կը կարօտին. ձեռքս տասնոց չկայ: Միւս տունին վարձակալները կը գանգատին ըսելով թէ տանիքը կը վազէ: Ի՞նչ ընեմ, ինչպէ՞ս ընեմ: Քեզի համար ասոնցմէ եւ ոչ մէկը գոյութիւն ունի: Իրիկունը գլուխդ քարձին դրածիդ պէս քունդ կը տանի. մինչ ե՞ս. եկուր անգամ մըն ալ ինծի հարցուր: Ժամերով կը չափեմ, կը չափչփեմ, աջ կը դառնամ, ձախ կը դառնամ, մէջէն չեմ կրնար ելլել: Ապրանք գնելու պիտի երթամ, ապառիկները չկրցայ գանձել: Վաճառականը դրամ կ'ուզէ: *Հէ՛յ կիտի* Համբար Աղա *հէ՛շ*, թմբուկին ձայնը հեռուէն անուշ կու գայ:

Համբար Աղա լուռ, մտիկ կ'ընէր: Իսկապէս Քիր Պօտոս Եուվանօփուլօսի ունեցած մտահոգութիւններէն ոչ մէկը ունէր ինք: Աշխարհի վրայ իր ունեցած մտահոգութիւններէն ոչ մէկը ունէր ինք: Աշխարհի վրայ իր ունեցած բաները սահմանափակ էին եւ ինք ալ երբեք դժգոհ չէր աւելի բան մը չունենալուն համար: Կարի մեքենայ մը եւ երկու ոտքին ճկոյթներուն վրայ ալ մէյմէկ խոշոր կոշկոռ. ահա Համբար Աղային աշխարհի վրայ ունեցած բոլոր ինչքն ու ստացուածքը: Կարի մեքենան, կէս կուշտ, կէս անօթի կ'ապրեցնէր զինքը. իսկ կոշկոռները, երկու երեք շաքարը անգամ մը տաշելու պարագային, երբեք դժբախտ չէին ըներ Համբար Աղան:

Համբար Աղա նստաւ «Ժուժկալ Նպարավաճառ» Քիր Պօտոս Եուվանօփուլօսին դէմ եւ սկսաւ շուրջը դիտել: Աչքերը, լուրիային գիները ցոյց տուող խաւաքարտին հանդիպեցան:

— Այս ի՞նչ է, հարցուց: 68նոց լուսիան ութսունը ի՞նք եղաւ:

— Է՛հ, ի՞նչ ընենք, պատասխանեց Քիր Պօտոս փորը շփելով: Հիմա այլեւս վաթսունըրորը դրուշի մե՛նք կ'առնենք: Կառքի դրամ, բեռնակիրի դրամ, կշիռքէն կը կորսնցնենք եւայլն: Հազիւ արժեզինը կը փրկէ:

Համբար Աղա մտիկ չըրաւ պատմութեան շարունակութիւնը: Աչքը այս անգամ ալ գնաց հանդիպեցաւ դարանին վրայ շարուած օղիի շիշերուն եւ նայուածքները գամուած մնացին այդպէս:

— Քիր Պօտո՛ս, ըսաւ յանկարծ աչքերը շիշերէն հեռացնելով եւ «Ժուժկալ Նպարավաճառ» Քիր Պօտոս Եուվանօփուլօսին դառնալով: Մա օղիները քանի՞ օրէն կը խմես:

— Ինչո՞ւ կը հարցնես, ըսաւ նպարավաճառը խնդալով:

— Չէ՛, ըսէ, քանի՞ օրէն կը խմես:

— Ամիսէ մը, պատասխանեց Քիր Պօտոս Եուվանօփուլօս:

— Մե՛ դք որ կարասի չափ ալ փոր մը ունիս, ըսաւ Համբար Ադա: Զիս շաքաթ մը հոս ձգէ, եօթերորդ օրը եկուր պարապ շիշերը ժողվէ:

Յետոյ անմիջապէս աւելցուց.

— Չէ, չէ, կատակ ըսի Քիր Պօտոս: Մենք ո՛ր, օղի խմող մարդը ուր: Հաշիւիս տետրակը լեցաւ, պարտքը կոկորդոս անցաւ...

«Ժուժկալ Նպարավաճառ» Քիր Պօտոս Եուվանօփուլօս մըտիկ չէր ըներ Համբար Ադայի ըսածները: Այս անգամ ալ նսպին պարկին վրայի խաւաքարտին սեւեռած էր աչքերը: Երկար երկար ու երազկոտ աչքերով կը նայէր խաւաքարտին, ուր գրուած էր. «Ոսպ 66 դրուշ»:

— Եթէ հակառակ դարձնես, 99 դրուշ կ'ըլլայ, մտածեց Քիր Պօտոս Եուվանօփուլօս: Մէկ քիլոյէն 33 դրուշ շահ: 15—20 դրուշ ալ գնումի գինին վրայէն, քիլօ գլուխ մօտաւորապէս կէս ոսկի շահ: Եթէ օրական տասնըհինգ քիլօ ծախեմ...

— Է՛յ, ի՞նչ կը մտածես, հարցուց Համբար Ադա յանկարծ անոր ծունկին գարնելով:

— Ի՞նչպէս չմտածեմ, ըսաւ Քիր Պօտոս Եուվանօփուլօս տխուր աչքերով անոր երեսը նայելով: Ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը. ի՞նչ պիտի ըլլայ մեր վերջը: Քու հոգոյ չէ: Ա՛ խ, եթէ ես ալ քեզի պէս ըլլայի...

— Ինձի՞ պէս:

— Հապա ի՞նչ: Թմբուկին ձայնը քեզի հեռուէն անուշ կու գայ, Համբար Ադա: Չըլլաս ու չգիտնաս: Մեծ լերան երկրաշարժն ալ մեծ կ'ըլլայ: Մկները օճառի պարկերը կը կրծեն. գետնախնձորները կը խոնաւնան ու կը ծլին. շաքարին տակը ջուր կը քալէ: Ասիկա խանութին հոգը: Միւս կողմէ, վարձակալները գլխուս միսը կ'ուտեն ամէն օր, ըսելով թէ տանիքը կը վազէ: Կինս՝ «ամարանոց երթանք» մը բռներ է կ'երթայ: Քիթէս բերնէս կը բերեն կեանքս: Ա՛ խ, Համբար Ադա, չըլլաս ու չգիտնաս: Քու կեանքդ *պէշի* կեանք է, *պէշի*: Յարգը գիտցիր քու այդ կեանքիդ:

Համբար Ադա երկար երկար նայեցաւ լուրիային գինը ցոյց տուող խաւաքարտին: Անկէ վերջ, ոտքի ելաւ ու Քիր Պօտոս Եուվանօփուլօսի դառնալով ըսաւ.

— Է՛հ, ի՞նչ ընենք, եթէ 89 է, թող այդպէս ըլլայ: Կոչէ տեսնենք կէս քիլօ լուրիա:

Քիր Պօտոս Եուվանօփուլօս *շաշուլան* մխրճեց լուբիայի պարկին մէջ ու կէս քիլօ լուբիա տուաւ Համբար Աղային: Համբար Աղա լուբիան առաւ ու գնաց: Իսկ Քիր Պօտոս Եուվանօփուլօս ապառիկի տետրակը բացաւ ու Համբար Աղայի անունին դէմ արձանագրեց.

«Կէս քիլօ լուբիա 44.5 դրուշ»:

Յետոյ գնաց մատիտով արեց այն գիրերն ու թուանշանները — «Լուբիա 68 դրուշ» — եւ խաւաքարտին ետեւի կողմը դարձնելով խոշոր գիրերով գրեց. — «Լուբիա 89 դրուշ»:

Անկէ վերջ անցաւ ոսպին պարկին դիմացը, պատէն կախուած պատկերին ճիշդ տակը ու ռունգերուն մէջ մխրճեց բթամատերուն մինչեւ այն մասերը որոնք մարդակազմութեան մէջ *Ֆալանժին* կը կոչուին: Յետոյ, երկար երկար քիթը խառնեց ու թաղուեցաւ իր անվերջ, անհատնում հաշիւներուն մէջ:

Դէպի Լոյս

Ե. Նորենց ծածկանունով, 22.07.1950

- ↑ **Ֆալանժին կոճ, մատնուկը (Ֆրանս . phalange, phalange)**